

Հարգելի դիմորդներ

2020-2021 ուսումնական տարվա հեռակա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրով 1-ին փուլով ընդունվածների հետ պայմանագրերը կնքվում են **2020 թվականի նոյեմբերի 17-ից 25-ը ներառյալ**:

Պայմանագիրը կնքելիս դիմորդը ներկայանում է անձամբ՝ անձը հաստատող փաստաթղթով, ներկայացնելով առցանց ուղարկված փաստաթղթերի պատճենները բնօրինակների հետ (պատճենները համեմատվում են բնօրինակների հետ և ընդունվում, իսկ բնօրինակները վերադարձվում են):

Պետք է ներկայացնել նաև 4 լուսանկար՝ 3*4 սմ չափսի:

Ուսման վարձը կարող եք վճարել ըստ կիսամյակների կամ ըստ ամիսների, վճարման վերջնաժամկետն է **նոյեմբերի 25-ը**:

Այն դիմորդները, որոնք ռազմական դրությանը պայմանավորված կամ կորոնավիրուսով վարակվելու պատճառով չեն կարողացել մասնակցել ընդունելության քննություններին, համապատասխան տեղեկանքներ ներկայացնելու դեպքում հնարավորություն կստանան մասնակցել ընդունելության քննություններին 2-րդ փուլով:

Տեղեկանքները կարող եք ներկայացնել նաև առցանց՝ ուղարկելով info@paara.am էլ. հասցեին մինչև 2020 թվականի նոյեմբերի 22-ը: Քննությունը կկայանա 2020 թվականի նոյեմբերի 23-ին:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 010 22-89-34 և 010 26-92-59 հեռախոսահամարներով

www.paara.am